Հոդվածի հղումը. Մելքումյան Հ., Սաֆարյան Լ., Նավասարդյան Մ., Դավթյան Կ. (2024), ՀՀ-ում կենսամակարդակը բնութագրող և դրա վրա ազդող գործոնների վերլուծությունը, *Տնտեսություն և հասարակություն, ՀՊՏՀ, Տնտեսագետ,* 2(5), 29-54, DOI: 10.52174/29538114_2024.2-29
Ներկայացվել է խմբագրություն՝ 17.09.2024 թ.
Ուղարկվել է գրախոսության՝ 23.09.2024 թ.
Երաշխավորվել է հրապարակման՝ 18.11.2024 թ.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու
https://orcid.org/0000-0003-3597-8079

ԼՈՒԻԶԱ ՍԱՐԱՖՅԱՆ
ՀՊՏՀ ֆինանսական հաշվառման ամբիոնի հայցորդ
https://orcid.org/0000-0002-4966-5076

ՄԻՔԱՅԵԼ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի ասպիրանտ
https://orcid.org/0000-0002-5474-6401

ԿԱՄՈ ԴԱՎԹՅԱՆ
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի ասպիրանտ
https://orcid.org/0000-0001-8063-5548

ՀՀ-ՈՒՄ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ[1]

Անվիճելի է, որ կենսամակարդակի բարձրացման հնարավորությունները ճիշտ գնահատելու, համապատասխան սոցիալական ու տնտեսական քաղաքականություն մշակելու համար առանձնակի կարևորվում է իրավիճակի վերաբերյալ հստակ և արժանահավատ տեղեկատվության տիրապետումը: Սակայն վերջին ժամանակներում, պայմանավորված համավարակով, ռուս-ուկրաինական պատերազմով, կլիմայական ու

[1] Հոդվածը պատրաստվել է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի՝ «Հարկաբյուջետային քաղաքականության ներառականության ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում» դրամաշնորհային թեմայով հետազոտության շրջանակներում:

էկոլոգիական աղետներով ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում, աճել է անորոշությունը: Արտաքին ազդող գործոններին գումարվում են երկրի ներսում ռազմաքաղաքական անբարենպաստ վիճակն ու անընդհատ ավելացող անկայունությունները, որոնք մտահոգիչ պատկեր են ստեղծում երկրի կենսամակարդակի բարձրացման հնարավորությունների սահմանափակման առումով: Այնուամենայնիվ, նման մարտահրավերները նոր չեն, անորոշություններն ու անսպասելի իրադարձությունները մշտապես ուղեկցել են քաղաքակրթության զարգացման ընթացքին, ուստի կարևոր է դրանք հաղթահարելու ճանապարհներ փնտրելն ու իրագործման հնարավորություններ բացահայտելը: Հենց նման պայմաններում կենսամակարդակի գնահատման հրատապությունը կասկած չի հարուցում:

Մակրոտնտեսական ցուցանիշների տեղաշարժերը, սոցիալ-տնտեսական բարեփոխումները էականորեն պայմանավորում են կենսամակարդակի փոփոխությունները: Հոդվածում, բացի կենսամակարդակը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների շարժընթացի վերլուծությունից, կենսամակարդակի բարելավմանը նպաստած գործոնների հստակեցումից, մատնանշվել են այն հիմնական խոչընդոտներն ու մարտահրավերները, որոնք սահմանափակել կամ կարող են սահմանափակել կենսամակարդակի բարձրացման ներկա և հետագա հնարավորությունները:

Հիմնաբառեր. *կենսամակարդակ, գործոն, մակրոտնտեսական ցուցանիշներ, կառուցվածք, գնաճ, աշխատավարձ, սպառում*

JEL: I31, E24

DOI: 10.52174/29538114_2024.2-29

Ներածություն: Հարկ է արձանագրել, որ բազմաթիվ և բազմաբնույթ գործոնների ներգործության արդյունքում ՀՀ-ում ձևավորել է տնտեսության որոշակի կառուցվածք՝ իր առանձնահատկություններով, որոնց որոշ մասը իրականում բացասաբար է անդրադառնում երկրի զարգացման և բնակչության բարեկեցության վրա, մասնավորապես՝ առկա ռեսուրսների և դրանց օգտագործման արդյունքների միջև անհամամասնության, եկամուտների ձևավորման և բաշխման գործընթացներում ի հայտ եկող անարդարության, տնտեսական մեխանիզմների գործադրման խաթարման և նմանատիպ այլ դրսևորումների ձևով: ՀՀ-ն, մյուս զարգացող տնտեսությունների նման, բնութագրվում է տնտեսական արդյունքի գծով տարածքային անհավասարություններով: Տնտեսական ակտիվության տարբերությունները խորացնում են կենսամակարդակի տարբերությունները՝ հանգեցնելով սպառման ճեղքի մեծացման: Վերոնշյալ հանգամանքներով է հիմնավորվում թեմայի արդիականությունը:

Վերջին տասնամյակի ընթացքում ըստ ճյուղերի կենտրոնացվածության մակարդակի աճ նկատվում է արդյունքի ձևավորման, զբաղվածության և միջին ամսական աշխատավարձի մասով, որի հիմնական պատճառը այլ ոլորտների հաշվին (հատկապես՝ գյուղատնտեսության) ծառայությունների ոլորտի աճն է: Վերջին տասնամյակում ծառայությունների մասնաբաժինը ՀՆԱ-ում, միջին հաշվով, մոտ 60% է կազմել: Զբաղվածները նույնպես կենտրոնանում են առավելապես ծառայությունների ոլորտում:

ՀՀ-ում կենտրոնացվածության տարածքային մակարդակը ևս տարեցտարի աճում է, որը ոչ միայն տնտեսության որակի բացասական ցուցիչ է, այլև սոցիալական, ժողովրդագրական և անվտանգային լրջագույն խնդիրներ է առաջացնում:

Կենսամակարդակի կարևոր քանակական ցուցանիշ հանդիսացող աղքատության մակարդակն անշեղորեն նվազել է 2012–2018 թթ.՝ 32,4%-ից հասնելով 23,5%-ի: Աղքատ բնակչության տեսակարար կշիռը 2019 թ. ավելացել է, քանի որ աղքատության գծերը էական փոփոխություններ կրեցին և նախորդ տարիների համեմատությամբ բարձրացվեցին:

2020 թ. արձանագրվել է 27% աղքատության մակարդակ, 2022-ին ցուցանիշը կազմել է 24.8%՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 1.7%-ային կետով: Աղքատների միջև սպառման անհավասարությունը՝ աղքատության սրությունը, 2022 թ. 1,3% էր, իսկ աղքատության խորությունը, որը բնութագրում է, թե աղքատների եկամուտները որքանով են ցածր աղքատության գծից, կազմել է 4,7%: Նշված ցուցանիշները շատ ավելի բարձր են գյուղական բնակավայրերում: Գյուղական համայնքներում խորությունը կազմել է 5,6%, իսկ սրությունը՝ 1,6%[2]: Սա նշանակում է, որ գյուղական համայնքներում ավելի շատ աղքատներ են կենտրոնացած աղքատության ստորին գծի շուրջ:

Հոդվածի հիմնական նպատակը կենսամակարդակի բարձրացումը սահմանափակող հիմնական խոչընդոտների բացահայտումն է՝ մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների փոփոխությունների շարժընթացի ուսումնասիրմամբ, բնակչության կենսամակարդակի վրա ազդեցության ուղիների մատնանշմամբ: Բացահայտված միտումները կարևոր են մակրոտնտեսական, հատկապես հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականություն իրականացնելիս՝ ապահովելու կայուն տնտեսական աճ և սոցիալական հավասարություն:

Գրականության ակնարկ: Բնակչության կենսամակարդակը մասնագիտական գրականության մեջ համարվում է հիմնական սոցիալ-տնտեսական բնութագրիչը, որով ներկայացվում է ինչպես հասարակության նյութական բարեկեցությունը, այնպես էլ որոշվում է երկրի տնտեսական գործունեության ընդհանրացված արդյունքը դիտարկվող ժամանակահատվածում:

Հետազոտողները կենսամակարդակի տնտեսագիտական բովանդակությունը ուսումնասիրել են տարբեր տեսանկյուններից՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են եկամուտը, հարստությունը, կրթությունը, առողջապահությունը, ընդհանուր բարեկեցությունը:

Հանդիպում են այս հասկացության տարբեր մեկնաբանումներ և, հետևաբար, վիճելի են կենսամակարդակի վիճակագրական բնութագրման համար անհրաժեշտ և համարժեք ցուցանիշների ընտրությունն ու դրանց համախմբի ներկայացումը:

Մասնագիտական գրականության մեջ հետազոտողների կողմից կենսամակարդակը մեկնաբանվում է տարբեր մոտեցումներով:

Արտադրության և ամբողջական արդյունքի ծավալի վրա հիմնված մոտեցումը ենթադրում է, որ կենսամակարդակը կախված է արտադրողական ուժերի զարգացման մակարդակից, տնտեսության ճյուղային, հատվածային կառուցվածքից, աշխատանքի արտադրողականությունից: Ըստ այս մոտեցման՝ ամեն մարդու կենսամակարդակը բարձրանում է յուրաքանչյուր հաջորդ պահին, երբ արտադրության ծավալներն ավելանում են: Այս առումով, հիմնարար

[2] Տե՛ս ՀՀ ՎԿ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2023 թ., էջ 35, https://armstat.am/file/article/poverty_2023_a_2.pdf

կարելի է համարել Կ. Մարքսի դիրքորոշումը, ըստ որի կենսամակարդակը միայն կյանքի ֆիզիկական կարիքների բավարարումը չէ: Հեղինակի կարծիքով՝ դա հասարակական պայմաններում առաջացած պահանջմունքների բավարարումն է, որոնցում մարդիկ ապրում և կրթվում են[3]: Շատ հետազոտողներ կենսամակարդակը մեկնաբանելիս առաջնահերթությունը տալիս են սպառման մակարդակի վրա հիմնված բնորոշումներին[4]: Սոցիալ-տնտեսական հետազոտություններում կենսամակարդակը մեկնաբանվում է նաև կյանքի արժեքի տեսանկյունից[5]՝ կենսամակարդակի փոփոխությունը պայմանավորելով սպառողական գների դինամիկայի և տնտեսավարող սուբյեկտների սպառման կառուցվածքի տեղաշարժերով:

Կենսամակարդակը բնութագրող մեկնաբանություններում բավական տարածված է ըստ եկամուտների մոտեցումը[6]: Պաշտոնական վիճակագրական նյութերում ևս, մասնավորապես՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տեղեկատվական ժողովածուներում եկամուտներին, աշխատավարձերին, կենսաթոշակներին, սոցիալական նպաստներին և տրանսֆերտներին վերաբերող ցուցանիշները վերագրվում են կենսամակարդակին:

Ս. Սևրյուկովան և Օ. Կորաստելևան կարծում են, որ կենսամակարդակը կախված է ինչպես մարդու ներքին հնարավորություններից, այնպես էլ արտաքին միջավայրից, հետևաբար՝ դրա աճն ուղղակիորեն պայմանավորված է մարդու բարեկեցության միտումներով, ինչպես նաև այն տնտեսական և սոցիալական պայմաններով, որոնցում գտնվում է բնակչությունը[7]:

---

[3] Տե՛ս **Маркс К., Энгельс Ф.,** Соч., 2 изд: Т. 16-М // Изд. Полит. литер., 1960, էջ 150, URL: https://www.marxists.org/russkij/marx/cw/t16.pdf

[4] Տե՛ս **Майер В. Ф.,** Планирование социального развития и повышения уровня жизни народа // М.: Изд-во МГУ, 1998, էջ 8, http://library.vscc.ac.ru/Files/books/1439211417uroven_zhizni_opyt_preprint.pdf
Mamunova A. E., Tulenova S. M., The theoretical aspect of the «standard of accommodation» category // The Journal of Psychology & Sociology, Vol. 49, No. 2, 2014, URL: https://bulletin-psysoc.kaznu.kz/index.php/1-psy/issue/view/26
Արմենակյան Ռ. Ռ., Բնակչության կենսամակարդակը և պետության սոցիալական քաղաքականությունը, Եր., 2004, էջ 8, URL: https://library.asue.am/open/1106.pdf

[5] Տե՛ս **Суринов А. Е., Луппов А. Б.,** Дифференциация доходов населения и стоимость жизни на субрегиональном уровне, Оценки для России // Экономический журнал Высшей школы экономики, № 4 (26), 2022, էջ 552–578, URL: https://ej.hse.ru/data/2022/12/07/1714262991/%D0%A1%D1%83%D1%80%D0%B8%D0%BD%D0%BE%D0%B2.pdf
Степанов В. С., Бобков В. Н., Шамаева Е. Ф., Одинцова Е. В., Построение модели, связывающей индикатор уровня жизни населения с комплексом показателей социально-экономической политики в регионах России // Уровень жизни населения регионов России, Том 18, No 4, 2022, էջ 450–465, DOI 10.19181/lsprr.2022.18.4.3, էջ 451, URL: https://cyberleninka.ru/article/n/postroenie-modeli-svyazyvayuschey-indikator-urovnya-zhizni-naseleniya-s-kompleksom-pokazateley-sotsialno-ekonomicheskoy-politiki-v/viewer

[6] Տե՛ս **Харитонова Т., Алексеева С.,** Уровень жизни населения: основные подходы к оценке показателей. Нива Поволжья // Экономические науки, № 2 (39), 2016 май, էջ 134, URL: https://cyberleninka.ru/article/n/uroven-zhizni-naseleniya-osnovnye-podhody-k-otsenke-pokazateley/viewer

[7] Տե՛ս **Севрюкова С. В., Коростелева О. Н.,** Формирование денежных доходов населения как социально-экономический аспект регулирования уровня жизни // Научно-методический электронный журнал «Концепт», № 11, 2017 (ноябрь), էջ 151–155, URL: https://e-koncept.ru/2017/174019.htm

Հեղինակների մի խումբ էլ համարում է, որ կենսամակարդակը, բացի նյութական կարիքների բավարարումից, պարունակում է սոցիալական կարիքների բավարարում[8]: Կենսամակարդակի բարելավումը ոչ միայն տնտեսական աճի արդյունք, այլև ՀՆԱ աճի կարևոր գործոն է[9]:

Տնտեսագիտական գրականության ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում ներկայացնելու կենսամակարդակի վրա ազդող գործոնները և պարզելու, թե ինչ ցուցանիշներ պետք է դրվեն կենսամակարդակի բարձրացմանն ուղղված տնտեսական քաղաքականության հիմքում: Դրանք հիմնականում դասակարգվում են տնտեսության ընդհանուր վիճակը, եկամտի, սպառման մակարդակները բնութագրող ցուցանիշների խմբերում:

Աղքատության կրճատման և կենսամակարդակի բարձրացման հիմնախնդիրները գտնվում են նաև հայազգի տնտեսագետների ուշադրության կենտրոնում: Առանձին հետազոտությունների շրջանակներում ուսումնասիրվել են եկամուտների անհավասարության և աղքատության փոխառնչությունները Հայաստանում: Այսպես՝ Ա. Խառատյանը, Ա. Գալստյանը բացահայտել են Հայաստանում աղքատության մակարդակի և եկամուտների անհավասարության վրա ազդող գործոնները[10]: Իրականացված ռեգրեսիոն վերլուծության արդյունքները փաստել են, որ ՀՆԱ և արտերկրից ստացվող տրանսֆերտների աճը նպաստել է աղքատության և եկամտային անհավասարության կրճատմանը: ՀՀ տնային տնտեսության՝ աղքատության կարգավիճակից դուրս գալուն նպաստող հիմնական գործոններից առանձնացվել են ընտանիքի գլխավորի կրթական մակարդակի աճը, արտերկրից ստացվող տրանսֆերտների աճը, ընտանիքի միջին ամսական ծախսերի աճը:

Ա. Խաչատրյանը տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության տվյալների հիման վրա իրականացրել է լոգիստիկ ռեգրեսիոն վերլուծություն և գնահատել ոչ աղքատ լինելու հավանականությունը՝ կախված տնային տնտեսության գլխավորի կրթական մակարդակից, անդամների թվից, բնակության վայրից[11]: Վերլուծության արդյունքները վկայում են, որ տնային տնտեսության գլխավորի կրթական մակարդակի յուրաքանչյուր աստիճանի ավելացումը 1,225 անգամ մեծացնում է ոչ աղքատ լինելու հավանականությունը, մինչդեռ դա նվազում է՝ տնային տնտեսության անդամների թվաքանակի աճից, գյուղական բնակավայրից, տնային տնտեսության գլխավորի տարիքի աճից, բնակարանային պայմաններից կախված: Հեղինակը, աղքատության հաղթահարման տեսանկյունից, խոչընդոտող առաջնային գործոններ է առանձնացրել՝ աշխատաշուկայի մասնակցություն,

---

[8] Տե՛ս **Рогачева Т. М., Нигматулин Е. З., Серикбаев Б. К.,** Социальная политика: качество жизни и социальная защита населения. Алматы: РИО ВАК РК, 2000, էջ 250:

[9] Տե՛ս **Kim T., Ambartsumyan A., Egamberdiyev F.,** The ways of improvement of living standards // International Journal of Psychosocial Rehabilitation, 24(04), 2020, էջ 1968, URL: https://www.researchgate.net/publication/339847000_THE_WAYS_OF_IMPROVEMENT_OF_LIVING_STANDARDS

[10] Տե՛ս **Խառատյան Ա., Գալստյան Ա.,** Եկամուտների անհավասարության և աղքատության արդի միտումները, «Բանբեր Երևանի համալսարանի. տնտեսագիտություն», N3, 2022, էջ 76-91, http://www.old.ysu.am/files/07A_Kharatyan_A_Galstyan.pdf

[11] Տե՛ս **Խաչատրյան Ա.**, Աղքատության նյութական և ոչ նյութական հարթությունները Հայաստանի Հանրապետությունում, «Տնտեսություն և հասարակություն», 3(3), 2023, էջ 69-95, https://asue.am/upload/files/science/economy/2023-year-3/4.pdf

արժանավայել աշխատատեղերի ապահովում, կրթական և առողջապահական հաստատությունների հասանելիություն:

ՀՀ բնակչության եկամուտների և ծախսերի վերլուծություն են իրականացրել Ռ. Ղազարյանը և Ս. Լևոնյանը[12]: Հեղինակները, հիմնվելով տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքների վրա, վերլուծել են Հայաստանում բնակչության եկամուտների և ծախսերի շարժընթացը 2008–2018 թթ., տնային տնտեսությունների եկամուտների և ծախսերի կազմը և կառուցվածքը, գնահատել՝ բնակչության եկամուտների կենտրոնացվածության աստիճանը: Հեղինակները եկել են եզրահանգման, որ ՀՀ բնակչության եկամուտների աճի տեմպը գերազանցել է ծախսերի աճի տեմպը: 2018-ին կտրուկ եկամուտների աճ է գրանցվել ամենաաղքատ առաջին դեցիլային խմբում, և այդ աճը հիմնականում պայմանավորվել է աշխատանքային եկամուտների աճով:

Կենսամակարդակին վերաբերող առկա գրականության ուսումնասիրությունից նկատելի է, որ հետազոտողների կողմից ընդգծվում է մակրոտնտեսական կայունության, եկամուտների բաշխման, սոցիալական քաղաքականության առանցքային դերը կենսամակարդակի բարելավման գործում:

Հետազոտության մեթոդաբանություն: ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած վիճակագրական տեղեկագրերը, տարեգրքերը, տվյալների շտեմարանները, ՀՀ կենտրոնական բանկի կողմից պարբերաբար հրապարակվող հաշվետվությունները և հետազոտությունները, հիմնախնդրով զբաղվող հայ և օտարերկրացի հեղինակների աշխատությունները, գիտական ամսագրերում հրապարակված հոդվածները ապահովել են հետազոտության տեսական և տեղեկատվական հենքը:

Հետազոտության մեջ կարևորվել են կենսամակարդակի փոփոխությունների վրա ազդող հետևյալ գործոնները՝ ՍԳԻ, գործազրկության մակարդակ, սպառողական վարկերի մասնաբաժինը ՀՆԱ-ում, պետական բյուջեի եկամուտներ, պետական բյուջեի ծախսեր, տնային տնտեսությունների սպառման մասնաբաժինը ընդհանուր սպառման ծախսերի մեջ, ԱՄՆ դոլարի միջին ամսական փոխարժեք, դեպի ՀՀ անձնական դրամական փոխանցումներ, ֆինանսական հաշվի մնացորդն ըստ վճարային հաշվեկշռի, մեկ շնչի հաշվով ՀՆԱ, աղքատության մակարդակ, Ջինիի գործակից, միջին ամսական անվանական աշխատավարձ:

Հետազոտության նպատակով և առաջադրված խնդիրներով պայմանավորված՝ կիրառվել են վիճակագրական, գրաֆիկական, վերլուծության և համադրման, ինդուկցիայի և դեդուկցիայի, պատմականի և տրամաբանականի զուգակցման, համեմատական, քանակական փոփոխություններից որակականին անցնելու մեթոդները:

Վիճակագրական մեթոդներն օգտագործվել են փաստացի տվյալների և ցուցանիշների հավաքագրման, տվյալների մշակման, ձևափոխման և դրանց միջոցով ցուցանիշների միջև կապերի և փոխազդեցությունների, դրսևորված օրինաչափությունների բացահայտման նպատակով: Գրաֆիկական մեթոդի

[12] Տե՛ս **Ղազարյան Ռ., Լևոնյան Մ.,** ՀՀ բնակչության եկամուտները և ծախսերը, «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, 11(2), 2020, էջ 142-149, https://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2020_2_142_149.pdf

կիրառմամբ՝ ուսումնասիրված տվյալները ներկայացվել են տարբեր աղյուսակների և գծապատկերների տեսքով, ինչը հնարավորություն է ընձեռել ավելի տեսանելի դարձնելու տարբեր ցուցանիշների զարգացման միտումները, կառուցվածքային փոփոխությունները: Հետազոտության ընթացքում օգտագործվել է դինամիկ վերլուծության մեթոդը, որը հնարավորություն է տվել ուսումնասիրելու երևույթների վարքագծային փոփոխությունները ժամանակի մեջ՝ տարբեր իրադարձությունների ազդեցությամբ: Նշված մեթոդն օգնել է բացահայտել, թե ժամանակի ընթացքում ուսումնասիրվող ցուցանիշներն ինչ վարքագիծ են դրսևորել՝ ի պատասխան էական գործոնների փոփոխությունների: Կիրառելով վերլուծության մեթոդը՝ կենսամակարդակը ձևավորող գործոնները դիտարկվել և ուսումնասիրվել են առանձին-առանձին: Համադրման մեթոդով, նշված վերլուծությունների արդյունքների զուգադրմամբ, համապարփակ պատկերացում է կազմվել կենսամակարդակի մասին: Ինդուկցիայի մեթոդի միջոցով բացահայտվել են կենսամակարդակը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխությունների օրինաչափությունները, և դրանք տարածվել են նաև կենսամակարդակի վրա: Այս մեթոդը, բացահայտված օրինաչափությունների հիման վրա, հնարավորություն է տվել ըմբռնելու և ձևակերպելու ընդհանուր եզրակացություններ բնակչության կենսամակարդակի վրա ազդող գործոնների մասին: Դեդուկցիայի մեթոդն էլ կիրառվել է՝ հասկանալու համար կենսամակարդակի փոփոխությունների հնարավոր ազդեցությունները մասնակի ցուցանիշների վրա: Երկու մեթոդներն էլ կարևոր են կենսամակարդակի հետազոտության համար, քանի որ դրանք թույլ են տալիս բացահայտել ընդհանուր օրինաչափությունները՝ հիմնված փորձառական տվյալների վրա: Այս մեթոդների համադրությունը հանգեցրել է բնակչության կենսամակարդակը որոշող գործոնների խոր ըմբռնման և դրա բարելավման արդյունավետ ռազմավարությունների մշակման: Համեմատական վերլուծության մեթոդն օգտագործվել է տարբեր ժամանակահատվածներում գրանցված ցուցանիշների միջև փոփոխություններն ըմբռնելու և կենսամակարդակի փոփոխության հիմնական միտումը բացահայտելու համար: Հետազոտության արդյունքների մեկնաբանման, եզրակացությունների ձևակերպման ընթացքը հնարավոր է դարձել քանակական փոփոխություններից որակականին անցնելու մեթոդի կիրառմամբ:

Վերլուծություն: Կենսամակարդակի կարևոր ցուցիչ հանդիսացող աղքատությունը ՀՀ-ում գնահատվում է՝ սկսած 1996-ից[13]: Մինչև 2008 թ., պայմանավորված տնտեսության դրական միտումներով, աղքատությունը Հայաստանում ուներ նվազման միտում:

[13] 2019 թ. հետո օգտագործվում է ՀԲ վերանայված՝ չորրորդ մեթոդաբանությունը:



Գծապատկեր 1. ***ՀՀ աղքատության մակարդակի շարժընթացը 2008–2022 թթ[14].***

2009 թ. սկսած՝ աղքատների թվի աճ է գրանցվել, որն աստիճանաբար խորացել է մինչև 2011 թ.՝ հատելով 35%-ի սահմանը, իսկ ծայրահեղ աղքատների տեսակարար կշիռը 1.6%-ից հասել է 3.7%-ի: Այնուհետև, սոցիալական քաղաքականության շնորհիվ, աղքատության միջին մակարդակը և ծայրահեղ աղքատությունը աստիճանաբար նվազել են՝ 2018 թ. տատանվելով համապատասխանաբար՝ 23.5%-ի և 1%-ի սահմաններում:

Աղյուսակ 1

Աղքատության մակարդակի շարժընթացը Երևանում և ՀՀ մարզերում, 2008–2022 թթ.[15]

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019*	2020*	2021*	2022*
ք. Երևան	20.1	26.7	27.1	27.5	25.6	25.5	25.2	25	24.9	22.4	19.9	14.1	19.9	15.9	18.5
Արագածոտն	20.3	25.4	28.9	20.7	21.2	22.7	18.7	16.1	15.7	17.6	16.2	51.4	32.9	13.5	7.9
Արարատ	31.3	39.8	42.4	39.3	34.6	32.4	28.5	27.3	26.9	21.7	19.8	29.4	32.8	28	23.8
Արմավիր	24.5	31.3	33	37	34.3	31.3	29	29.6	30	26.2	23.5	22.5	32.2	37.9	40.8
Գեղարքունիք	32	40.4	43.6	37	35.5	35.8	32.3	32.1	28.8	20.5	22.4	43.5	48.1	49.1	33.9
Լոռի	34.2	41.7	45.9	45.4	38.7	38.6	36.4	36.2	35.8	29.7	29.4	30.1	19	21.8	18.6
Կոտայք	39.5	43	46.8	45.5	42.5	42.5	37.2	35.9	35.4	31.1	22.7	31.9	17.4	23.6	26.1
Շիրակ	42.4	47.2	48.3	47.7	46	45.9	44.2	45.3	45.5	44.3	42.2	48.4	42.9	46.9	41.6
Սյունիք	20.3	23.4	26.8	26.8	25.6	25.2	24.2	24.5	24.2	18.5	16.7	12.1	6.1	2.8	5.4
Վայոց ձոր	21.1	30.3	37.1	29.9	20.7	21	18.2	16.9	18.8	16.9	18.6	19.3	21.9	26.6	15.7
Տավուշ	23.2	31.3	26.1	26.7	27.5	27.7	30.6	35.3	33.8	27.8	25.6	25.6	37.5	38.2	37.4
ՀՀ	27.6	34.1	35.8	35	32.4	32	30	29.8	29.4	25.7	23.5	26.4	27	26.5	24.8

[14] ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2008-2023 թթ., https://www.armstat.am/am/?nid=81&pthid=pov&year=&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC

[15] Նույն տեղում:

Ինչ վերաբերում է աղքատության տարածքային բաշխվածությանը, ապա այստեղ ևս առկա է ընդգծված անհամաչափություն: Մասնավորապես՝ վերջին տարիներին աղքատության մակարդակը հանրապետության միջին ցուցանիշից էականորեն բարձր է եղել Շիրակի, Տավուշի, Գեղարքունիքի և Արմավիրի մարզերում, մինչդեռ զգալի ցածր է (հատկապես 2019 թ. մեթոդաբանական փոփոխություններից հետո) Սյունիքի, Արագածոտնի մարզերում, մայրաքաղաքում, ինչպես նաև Լոռու և Վայոց ձորի մարզերում:

ՀՀ-ում գործազրկության մակարդակը վերջին տարիներին էականորեն կրճատվել է. 2018 թ. 19%-ից նվազել է՝ 2023 թ. հասնելով 12.6%-ի: Գործազրկության մակարդակը գրեթե մշտապես ավելի բարձր է եղել կանանց շրջանում:



Գծապատկեր 2. ***ՀՀ-ում գործազրկության մակարդակն ըստ սեռի, 2010–2023 թթ.***[16]

Ինչ վերաբերում է զբաղվածության տարածքային ընդգրկվածությանը, ապա բերված տվյալները վկայում են, որ դիտարկվող ողջ ժամանակահատվածում գործազրկության մակարդակն անհամեմատ ավելի բարձր է եղել քաղաքային բնակավայրերում: Դա բացատրվում է քաղաքներում բնակչության ավելի բարձր կենտրոնացվածությամբ, աշխատանք գտնելու նպատակով գյուղից քաղաք ներքին միգրացիոն հոսքերով, ինչպես նաև գյուղական բնակավայրերում ինքնազբաղվածների մեծ թվով:

Համադրելով գործազրկության և աղքատության դինամիկան ՀՀ-ում՝ նկատում ենք, որ վերջիններս զուգամիտում են, և մեկի աճը ուղղորդվում է մյուսի աճով կամ հակառակը:

Չնայած մակրոտնտեսական ցուցանիշների բարելավմանը՝ աղքատությունը բավականին բարձր մակարդակում է, և, փաստորեն, տնտեսության աշխուժացումը չի ազդում ընդհանուր բնակչության կենսամակարդակի բարելավման վրա: Դա հիմնականում եկամուտների անհավասարաչափ բաշխման ու բնակչության բևեռացման հետևանք է:

[16] ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը, 2010–2023 թթ.:



Գծապատկեր 3. ***ՀՀ գործազրկության մակարդակը քաղաքային ու գյուղական բնակավայրերում, 2010–2023 թթ.***[17]

Վիճակագրական տվյալները փաստում են, որ, վերջին տասը տարվա արդյունքներով, Հայաստանում ՀՆԱ ձևավորման մեջ, ըստ եռամակարդակ մոդելի, հատվածների մասնաբաժինների էական փոփոխություններ կան՝ հիմնականում պայմանավորված գյուղատնտեսության, շինարարության, ֆինանսական ու ապահովագրական գործունեության, տեղեկատվության և կապի ոլորտների տեսակարար կշիռների փոփոխություններով[18]: 2012–2023 թթ. ընթացքում առաջնային հատվածի բաժինը ՀՆԱ-ում աստիճանաբար փոքրանում է՝ պայմանավորված ոչ այնքան առաջնային հատվածում ընդգրկված ոլորտներում արդյունքի ծավալային էական փոփոխություններով, որքան երրորդային հատվածի ծավալային շատ մեծ աճով: Երկրորդային հատվածի առումով, տեսակարար կշռի նվազման միտում կա, իսկ երրորդային հատվածի բաժինն աստիճանաբար աճում է՝ չորս-հինգ ոլորտների աճով պայմանավորված:

ՀՀ ՀՆԱ ծախսային կառուցվածքի էական առանձնահատկությունը տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի մեծ բաժինն է: Չնայած վերջին տարիների դրական փոփոխությանը, այն դեռևս բարձր է՝ առանձին տարիներին գերազանցելով ՀՆԱ 80%-ը[19]:

Ըստ եկամուտների ՀՆԱ կառուցվածքի՝ վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության տեսակարար կշիռը տատանվում է 37%–40%-ի միջակայքում, իսկ համախառն շահույթի ու համախառն եկամուտների բաժինը շուրջ մեկ երրորդով ավելի է աշխատավարձի բաժնից՝ կազմելով մոտավորապես 60%:

---

[17] Նույն տեղում:

[18] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, Տվյալների բազաներ, Այլ տվյալների բազաներ, Մակրոտնտեսական ցուցանիշներ և ազգային հաշիվներ, ԱՀՀ 2008, Տարեկան ցուցանիշներ, ՀՆԱ արտադրություն, ՀՆԱ, Ազգային հաշիվներ, https://armstat.am/am/?nid=202

[19] ՀՀ Կենտրոնական բանկ, Վիճակագրություն, Իրական հատվածի վիճակագրություն, Վիճակագրական տվյալներ, Տարեկան տվյալներ, Եկամուտների օգտագործման եղանակով հաշվարկված ՀՆԱ բաղադրատարրերը, https://www.cba.am/am/SitePages/statrealsector.aspx

Հայաստանում աշխատավարձերի[20] վերաբերյալ ամենակարևոր փաստերից մեկը տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտում, առհասարակ՝ ոչ պետական հատվածում աշխատավարձի բարձր մակարդակն է: ՏՏ-ն մշտապես առաջարկում է ամենաբարձր աշխատավարձերը՝ առաջ անցնելով այլ ոլորտներից: Պետական հատվածում ևս դա ամենաբարձր վարձատրվող ոլորտներից մեկն է: Ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտը աշխատավարձի մակարդակով շատ չի զիջում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին, հատկապես պետական հատվածում, որտեղ նույնիսկ գերազանցել է ՏՏ աշխատավարձը 2018-ից 2021 թվականներին: Այնուամենայնիվ, սկսած 2022 թվականի կեսերից և ավելի ակնհայտ կերպով՝ 2023 թվականին, ՏՏ ոլորտի աշխատավարձերը կրկին առաջ են անցել: Դա կարող է պայմանավորված լինել հատկապես հենց այդ ոլորտում մասնագիտացում ունեցող մարդկանց ներհոսքով՝ պայմանավորված Ռուսաստան-Ուկրաինա հակամարտությամբ:

Պետական հատվածում աշխատավարձերն աճում են տարվա ընթացքում և դեկտեմբեր ամսին հասնում ամենաբարձր մակարդակին, իսկ ոչ պետական հատվածում զգալիորեն աճում են յուրաքանչյուր տարվա մարտ և դեկտեմբեր ամիսներին և հենց այս ժամանակահատվածներում էլ երբեմն գերազանցում են ՏՏ ոլորտի ցուցանիշները: ՏՏ ոլորտի աշխատավարձերը համեմատաբար կայուն են և բարձր՝ ողջ տարվա ընթացքում: Չնայած ֆինանսական հատվածում ժամանակ առ ժամանակ գրանցված աճին՝ ՏՏ ոլորտը պահպանում է իր դիրքը՝ որպես ընդհանուր առմամբ ավելի բարձր վարձատրվող ոլորտ:

Ի հակադրություն վերը նշված ոլորտների՝ գյուղատնտեսության և կրթության ոլորտներն ունեն աշխատավարձի ամենացածր մակարդակները ոչ պետական հատվածում: Կրթությունը թեև տնտեսական և սոցիալական զարգացման հիմնաքարն է, սակայն այս ոլորտում հատկապես ցածր է վարձատրությունը: Չնայած ոչ պետական կրթության բնագավառում աշխատավարձերը մի փոքր ավելի բարձր են, քան պետական հատվածում, այնուամենայնիվ, դրանք մնում են ցածր՝ համեմատած այլ ոչ պետական հատվածների հետ: Այս անհավասարությունը մտահոգիչ է՝ հաշվի առնելով, որ Հայաստանի կրթական հաստատությունների մեծ մասը պետական հատվածում է. մի փոքր մասն է միայն ավելի լավ վարձատրվող ոչ պետական կրթության ոլորտում:

Ուսումնասիրելով աշխատավարձերի մակարդակն ըստ մարզերի՝ ավելի ակնհայտ ենք տեսնում ՀՀ տնտեսությունում առկա անհամամասնությունները: Երևանում, որտեղ բնակվում է երկրի բնակչության մոտ մեկ երրորդը, աշխատավարձերը բարձր են ՀՀ միջին մակարդակից: Սյունիքի մարզում աշխատավարձերի մակարդակն ամենաբարձրն է՝ գերազանցելով նաև Երևանի ցուցանիշը: Դրա բացատրությունը արդյունաբերական արտադրանքի մեջ մարզի զգալի տեսակարար կշիռն է՝ պայմանավորված «հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում» ճյուղերի մեծ մասնա-

[20] Աշխատավարձերի վերլուծության տեղեկատվական աղբյուրը՝ https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_2%20Population%20and%20social%20processes_23%20Employment%20and%20unemployment/PS-eu-19-2022.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb

բաժնով: 2018–2022 թթ. այս ոլորտում միջին ամսական աշխատավարձի մակարդակը հասել է 463,726 դրամի՝ 2013–2017 թթ. համեմատությամբ աճելով 31.3%-ով: Մյուս մարզերը բավականին զիջում են իրենց ցուցանիշներով, և բոլորի դեպքում էլ աշխատավարձերի միջին մակարդակը Հայաստանի միջինից ցածր է: 2023 թ. աշխատավարձի ամենացածր մակարդակը գրանցվել է Գեղարքունիքի մարզում: Այս տարբերություններն ընդգծում են տնտեսական հնարավորությունների կենտրոնացումը տարբեր ոլորտներում և շրջաններում:

Դիտարկելով աշխատավարձերի մակարդակներն ըստ կազմակերպության չափերի՝ նկատում ենք, որ 2024 թ. Հայաստանի մոտ 68000 փոքր ընկերություններում՝ 10-ից պակաս աշխատողներով, միջին աշխատավարձը կազմել է մոտ 130,000 ՀՀ դրամ: Մյուս կողմից՝ ավելի քան 250 աշխատող ունեցող խոշոր ընկերությունները (մոտ 300 կազմակերպություն) առաջարկում էին շատ ավելի բարձր՝ 380,000 դրամը գերազանցող միջին աշխատավարձ:

Հարկ ենք համարում փաստել, որ վերջին տարիներին տնային տնտեսությունների եկամուտների աճ է գրանցվել, ինչը պայմանավորված է եղել նոր աշխատատեղերի, ինչպես նաև անվանական միջին աշխատավարձերի աճով: Սակայն տնտեսության որոշ ոլորտներում գնաճի տեմպը առաջանցիկ է եղել աշխատավարձերի աճի տեմպի նկատմամբ, ուստի այդ ոլորտներում կենսամակարդակի բարելավում տեղի չի ունեցել:



Գծապատկեր 4. ***Գնաճը նախորդ տարվա նկատմամբ՝ ՀՀ-ում գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունումից ի վեր (2006–2022 թթ.)***[21]

Առողջապահական, աշխարհաքաղաքական զարգացումներով և դրանցից բխող տնտեսական, սոցիալական մարտահրավերներով պայմանավորված՝ 2020 թվականը աշխարհի և հատկապես Հայաստանի համար բավականին ծանր տարի էր: ՀՀ ԿԲ-ն վարել է խթանող դրամավարկային քաղաքականություն: Թույլ պահանջարկին էականորեն նպաստել են համավարակի, իսկ

[21] ՀՀ ԿԲ գնաճի հաշվետվություններ, https://www.cba.am/am/SitePages/mppubl.aspx

սեպտեմբերի 27–ից՝ երկրում հայտարարված ռազմական դրության առողջապահական և տնտեսական հետևանքները: Տարեվերջին արձանագրված գնաճը պայմանավորված է եղել ներմուծված պարենային և ոչ պարենային ապրանքների գների աճով: Այս ամենը կապված է նաև դրամի արժեզրկման հետ: 2021 թ. դեկտեմբերին, 2020 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, արձանագրվել է սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի 12,9% գնաճ, որին մեծապես նպաստել է մրգի և բանջարեղենի ապրանքախմբերում գնաճը:

2022 թ. առաջին կիսամյակում ՀՀ մակրոտնտեսական միջավայրը և հատկապես գնաճային զարգացումները մեծապես կրել են փետրվարի վերջից սրված ռուս-ուկրաինական հակամարտության, Ռուսաստանի տնտեսության նկատմամբ կիրառված տարբեր պատժամիջոցների և դրանցից ածանցված աննախադեպ մեծ անորոշությունների ազդեցությունները: Դրանք արտահայտվել են ՀՀ հիմնական գործընկեր երկրների տնտեսական աճի տեմպերի զգալի դանդաղմամբ, ինչպես նաև արժեշղթաների խաթարումների հետևանքով էներգակիրների և պարենային ապրանքների՝ միջազգային շուկաներում գների անհամեմատ բարձր աճով: ՀՀ տնտեսությունում դիտվող բարձր ներքին պահանջարկը հիմնականում պայմանավորած էր միջազգային այցելուների և զբոսաշրջիկների մեծ հոսքով: Տվյալ ժամանակահատվածում արձանագրվել է արտերկրից ֆինանսական փոխանցումների զգալի ներհոսք, ինչի արդյունքում արժևորվել է դրամը: Դա նպաստել է ձևավորված գնաճային միջավայրի որոշակի մեղմմանը:

Գների աճին 2021–2022 թթ. ամենամեծ նպաստում ունեցող «սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ» ապրանքախմբի մեջ ներառված ապրանքների գները հիմնականում աճել են շատ ավելի բարձր տեմպով:

2023 թվականի տարեսկզբին դեռևս պահպանվել էր բարձր պահանջարկը, ինչի արդյունքում 12-ամսյա գնաճը թեև որոշակիորեն դանդաղել էր, սակայն մնում էր բավականին բարձր (8.1%՝ փետրվարին): Տարվա ընթացքում ներմուծված պարենային ապրանքների մասով դիտվող գնանկումային երևույթների հաշվին արտաքին գնաճային ճնշումները էականորեն թուլացել են: Տվյալ շրջանում ԿԲ-ն իջեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Իրականացված գործողությունների հետևանքով արդեն 2023 թվականի սեպտեմբերին գրանցվել է 0.1% գնաճ: Տարվա երկրորդ կիսամյակում 12-ամսյա գնաճը նվազել է սպասվածից ավելի արագ տեմպերով: Դրա հիմնական պատճառներից են դրամի արժևորումը, արտաքին հատվածից փոխանցվող գնանկումային ազդեցությունները: Ստեղծված իրավիճակում ՀՀ ԿԲ-ն իրականացրել է խթանող դրամավարկային քաղաքականություն՝ գնաճը նպատակային մակարդակին հասցնելու համար:

ՀՀ-ում ԱՄՆ դոլարի փոխարժեքի ազդեցությունը ընդհանուր տնտեսական զարգացման և, մասնավորապես, կենսամակարդակի վրա բազմաշերտ է: ՀՀ-ն, որպես առավելապես ներմուծման վրա հենված տնտեսություն, կախվածություն ունի փոխարժեքի տատանումներից, մյուս կողմից էլ բնակչության առանձին շերտերի մոտ եկամուտների մեջ արտաքին տրանսֆերտների էական կշիռն ու տնտեսությունում դոլարայնացման համեմատաբար բարձր մակարդակը ռիսկեր են ստեղծում ու էականորեն ազդում գնաճի ու սպառման ծավալների վրա:



Գծապատկեր 5. ***ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը ՀՀ դրամի նկատմամբ 2008–2023 թթ.***[22]

2008 թվականից սկսած՝ փոխարժեքի մի քանի կտրուկ տատանումներ են գրանցվել, որոնցից առաջինը 2009 թվականի մարտին էր: Մինչ այդ, ԿԲ-ի կողմից բորսայում արտարժութային ինտերվենցիաներով տևական ժամանակ կայուն էր պահվում ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքը, ինչից հետո՝ մարտին, փոխարժեքը մոտ 20 տոկոսով աճեց: Մյուս կտրուկ աճը 2014 թվականի հոկտեմբերից հետո էր, երբ ԿԲ-ն ստիպված եղավ փոփոխել վերաֆինանսավորման տոկոսադրույքը և պարտադիր պահուստավորման նորմատիվները, ինչից հետո իրավիճակը կայունացավ: 2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազմի ավարտից հետո հոկտեմբերի նկատմամբ փոխարժեքը դեկտեմբերի վերջին աճել էր մոտ 5.5 տոկոսով: Այս անգամ պատճառները ներքաղաքական և արտաքին քաղաքական սպասումներն ու անորոշություններն էին: Փոխարժեքի կտրուկ աճի հաջորդ փուլը պայմանավորված էր ռուս-ուկրաինական պատերազմի ազդեցությամբ: Սակայն 2022 թվականի մարտին փոխարժեքի կտրուկ աճից հետո իրավիճակը կարգավորվեց, ինչին հաջորդեց արդեն փոխարժեքի նվազման շրջանը, որի արդյունքում 2022 թվականի փետրվարի վերջի համեմատությամբ 2022 թվականի դեկտեմբերի վերջին ԱՄՆ դոլարի փոխարժեքը ՀՀ դրամի նկատմամբ նվազել էր 17.8 տոկոսով: Նման իրավիճակում տնային տնտեսությունների այն հատվածը, որի եկամուտների մեջ էական մաս են կազմում արտաքին տրանսֆերտները, տեղեկատվական ոլորտի կազմակերպությունները, որոնց վճարումները դրսից են, եկամուտների նվազում են ունենում արտարժութային փոխարժեքի անկման հետևանքով: Վերջին տարիների տատանումների պարագայում հնարավոր դարձավ խուսափել դոլարայնացման կտրուկ բարձրացումից՝ շնորհիվ ԿԲ քաղաքականության և սպասումների վրա ազդելու արդյունավետության:

[22] ՀՀ ԿԲ, Դրամի նկատմամբ որոշ արժույթների միջին և ժամանակահատվածի վերջի դրությամբ փոխարժեքներ, https://www.cba.am/stat/stat_data_arm/8_Exchange_rates_arm.xls

Հայաստանում բնակչության բևեռացումն ըստ եկամուտների առավել խորն է, քան ըստ սպառման ագրեգատի: Դա հնարավոր է պայմանավորված լինի այն հանգամանքով, որ արտերկրից ստացած դրամական հոսքերը ինչ-որ չափով կարողանում են մեղմել ըստ սպառման ագրեգատի անհավասարությունը: Հատկանշական է նաև, որ, ըստ սպառման ագրեգատի, Ջինիի գործակիցը կտրուկ բարելավվել է հատկապես 2019–2021 թթ., սակայն նույն ժամանակահատվածում, ըստ եկամտի ագրեգատի, աճել է, այնուհետև վերադարձել իր նախկին մակարդակին:



Գծապատկեր 6. ***Ջինիի գործակցի շարժընթացը 2008–2022 թթ.***[23]

Տնային տնտեսությունների նյութական և դրամական վիճակը բնութագրող կարևոր ցուցանիշ են նաև տնային տնտեսության ամբողջական սպառողական ծախսերը:



Գծապատկեր 7. ***Տնային տնտեսությունների սպառողական ծախսերի կառուցվածքը 2022 թ.***[24]

[23] Գծապատկերը կազմել են հեղինակները ՀՀ ՎԿ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2008–2023 թթ. տարեկան զեկույցների տվյալների հիման վրա, URL: https://armstat.am/am/

[24] ՀՀ վիճակագրական կոմիտե, Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2022 թ.:

Տնային տնտեսությունները եկամտի գերակշիռ՝ 46.5%-ը հատկացնում են սննդի ծախսերին, 28.8%-ը ծառայությունների ծախսերն են, 19.9%-ը՝ ոչ պարենային ապրանքների ծախսերը: Սննդին տրամադրվող ծախսերի տեսակարար կշիռը վերջին տարիներին աստիճանաբար ավելացել է և եթե 2019 թ. կազմում էր 40.6%, ապա արդեն 2022 թ. 46.5% էր: 2008 թ. ցուցանիշը եղել է անհամեմատ բարձր՝ մոտ 52%:

Բնակչության սպառման վրա ազդող էական ֆինանսական գործիք համարվող վարկավորումը հնարավորություն է տալիս մեծացնելու ամբողջական պահանջարկը և սպառումը՝ ստեղծելով տնտեսական զարգացման լրացուցիչ խթաններ: Վարկավորման ծավալների աճը նաև տնային տնտեսությունների եկամուտների աճի ու ապագա սպասումների դրական միտումների ազդակ է: Մյուս կողմից՝ սպառողական վարկավորման ծավալների մեծացումը ավելացնում է տնային տնտեսությունների պարտքային բեռը: Սպառողական վարկերի սպասարկումը նվազեցնում է տնային տնտեսության այլ կարևոր ապրանքների ձեռքբերման համար անհրաժեշտ ընթացիկ եկամուտները, կրճատվում է սպառումը, այնուհետև՝ ամբողջական պահանջարկը, նվազում են խնայողությունները, դրանով պայմանավորված՝ ներդրումները, արդյունքում այդ ամենը բացասական ազդեցություն է թողնում տնտեսական աճի և զարգացման վրա: Սպառողական վարկերի որոշ մասն էլ ուղղվում է ներմուծվող ապրանքների ձեռքբերմանը՝ ողջ ծավալով չնպաստելով ՀՆԱ ավելացմանը:



Գծապատկեր 8. ***Սպառողական և հիպոտեկային վարկերի ծավալները 2008–2024 թթ. (մլն ՀՀ դրամ)***[25]

2008 թվականից սկսած՝ սպառողական վարկերի շարունակական աճի միտում է գրանցվել: Աճի դանդաղման կամ ծավալների անկման մի քանի փուլեր են եղել, որոնք հիմնականում համապատասխանել են կամ տնտեսական աճի դանդաղմանը, կամ արտարժույթի փոխարժեքի էական տատանումներին: Այսպես՝ աճի առաջին հիմնական դանդաղման փուլը համընկնում է 2008 թվականի վերջից մինչև 2008 թվականի հուլիսն ընկած ժամանակա-

[25] ՀՀ ԿԲ կայքէջ, Վիճակագրություն, Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների վարկերն ըստ ոլորտների (ամսական), https://www.cba.am/stat/stat_data_arm/7_loans%20by%20branches_arm.xlsx

հատվածի հետ, որից հետո՝ մինչև 2014 թվականի վերջն ընկած հատվածում միտումներն աճող են: Այնուհետև աճի ավելի արագ տեմպ է 2017 թվականի աշնանից մինչև 2020 թվականի մարտը, որը համապատասխանում է COVID-19 համավարակով պայմանավորված սահմանափակումներին: Անկման միտումը շարունակվեց մինչև 2021 թվականի հոկտեմբեր, և ավելի արագ աճ սկսվեց 2022 թվականի նոյեմբերից: Աճի վերջին փուլը համապատասխանում է ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված տնտեսական ակտիվության մեծացմանը: Արդյունքում՝ 2008 թվականի սկզբից մինչև 2024 թվականի հունիսը սպառողական վարկերն աճել են 9.9 անգամ, իսկ 2022 թվականից հետո աճը 51 տոկոս է:

Հիպոտեկային վարկերի ծավալների աճն ավելի սահուն է. հիմնականում աճի տեմպերը կարելի է պայմանավորել եկամտային հարկի վերադարձի մասին օրենքի գործողությամբ ու ընթացքով: Մի կողմից՝ ընդունված օրենսդրական հնարավորությունը, մյուս կողմից՝ դրա գործողության ժամկետի սահմանափակումն ու այլ մարզեր տեղափոխումը շուկայի զարգացմանը նոր արագություն հաղորդեցին: Շուկայի զարգացմանը նպաստեց նաև, 2022 թվականին ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված, օտարերկրացիների ներհոսքը, ինչի արդյունքում մեծացավ բնակարանների և ընդհանրապես անշարժ գույքի վարձակալության պահանջարկը, բարձրացան վճարները: Օրենքի ընդունումից հետո՝ մինչև 2024 թվականի հունիսը հիպոտեկային վարկերի ծավալներն աճել են մոտ 6.9 անգամ:

Անդրադառնալով դրամական փոխանցումներին՝ նշենք, որ ըստ վճարային հաշվեկշռի՝ դեպի ՀՀ դրամական փոխանցումները հիմնականում արտաքին ազդեցություն են կրում, և դրանց աճի տեմպերը հիմնականում փոփոխվում են այլ երկրներում տեղի ունեցող տնտեսական ու քաղաքական գործընթացների հետևանքով:



Գծապատկեր 9. ***Դեպի ՀՀ անձնական դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի (մլն ԱՄՆ դոլար) և դրա աճի տեմպը***[26]

[26] ՀՀ ԿԲ կայքէջ, Վիճակագրություն, Դեպի ՀՀ դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի, https://www.cba.am/stat/stat_data_arm/Remittances_arm.xlsx

Ըստ վճարային հաշվեկշռի՝ դեպի ՀՀ փոխանցումների էական մասը անձնական տրանսֆերտներ են և զուտ աշխատավարձը, իսկ կապիտալ տրանսֆերտները դրանց մեջ փոքր կշիռ են կազմում: Դեպի ՀՀ դրամական փոխանցումների աճի տեմպերը նվազել են հիմնականում դրանց աղբյուր հանդիսացող երկրներում տեղի ունեցող գործընթացների հետևանքով: Նման օրինակ է 2008 թվականի վերջից սկսված անկումը, որը համապատասխանում է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամին, այնուհետև 2014 թվականի առաջին եռամսյակից հետո սկսված անկումը, որն իր նվազագույն մակարդակին հասավ 2015 թվականի սկզբին: Հետագայում անկումները պայմանավորված են եղել COVID-19 համավարակով, սակայն 2020 թվականի վերջից դեպի ՀՀ դրամական փոխանցումներն աճել են, և դրանց աճի տեմպը դանդաղել է 2022 թվականի սկզբից, ինչը համընկնում է ռուս-ուկրաինական պատերազմի սկզբի հետ: Սակայն նույն պատերազմի հետևանքով պայմանավորված՝ դրանց աճի տեմպերը արագանում են և սկսում են նվազել միայն 2023 թվականի սկզբից:



Գծապատկեր 10. ***Ֆինանսական հաշվի մնացորդն ըստ վճարային հաշվեկշռի (մլն ԱՄՆ դոլար) և դրա աճի տեմպը, 2008–2024 թթ. առաջին եռամսյակ***[27]

Ֆինանսական հաշվի մնացորդի մեծությունը ՀՀ-ում ավանդաբար բացասական է, ինչը վկայում է հիմնականում միջոցների ներհոսքի մասին: Միայն 2022 թվականի երկրորդ և երրորդ եռամսյակներում է, որ էականորեն աճել են ՀՀ ռեզիդենտների կողմից արտաքին ներդրումների ծավալները, որոնք հիմնականում ֆինանսական կազմակերպությունների կողմից կատարված ներդրումներն են արտասահմանյան ակտիվներում: Նման իրավիճակը հիմնականում պայմանավորված է ռուս-ուկրաինական պատերազմի և պատժամիջոցների ու սահմանափակումների հետևանքով ֆինանսական կազմակերպություններ հոսքերի մեծացմամբ, ինչը հնարավորություն տվեց ներդրումներ կատարելու արտասահմանյան ակտիվներում:

[27] ՀՀ ԿԲ կայքէջ, Վիճակագրություն, ՀՀ վճարային հաշվեկշիռ, https://www.cba.am/stat/stat_data_arm/BOP_arm_for_site_BPM6_rev.xls

Անդրադառնանք նաև ՀՀ պետական բյուջեի առավել հատկանշական ցուցանիշներին: Պետական բյուջեյի եկամուտների ու ծախսերի դինամիկայի վերլուծությունը փաստում է դրանց անշեղ աճը դիտարկվող ամբողջ ժամանակահատվածի համար: 2008 թվականի համեմատությամբ 2023 թվականի վերջին բյուջեի եկամուտներն աճել են 3 անգամ, իսկ ծախսերը՝ մոտ 3.1 անգամ:

ՀՆԱ-ում եկամուտների ու ծախսերի կշիռների դինամիկան, կարելի է ասել՝ աճող է, սակայն ընթացիկ դինամիկան տատանվում է՝ կախված մի քանի գործոններից: Մի կողմից՝ ՀՆԱ նվազումը ճգնաժամային կամ տնտեսության անկման փուլերում՝ 2009, 2015, 2020 թվականներին, հանգեցնում է ՀՆԱ-ի մեջ պետական ծախսերի էական աճի, իսկ նույն ժամանակահատվածներում, օրինակ՝ 2009 թ., ինչպես նաև 2021 թ. ՀՆԱ-ում նվազում է եկամուտների կշիռը:



Գծապատկեր 11. ***ՀՀ պետական բյուջեի եկամուտներն ու ծախսերը (մլն ՀՀ դրամ) և դրանց կշիռը ՀՆԱ-ում, 2008–2023 թթ.***[28]

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2023 թվականին կազմել են 2,359 մլրդ դրամ, որը 2022 թվականի համեմատությամբ աճել է 14,3%-ով: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների 94,2%-ը հարկային եկամուտներն են. 2023 թ. կազմել են 2,221 մլրդ դրամ (15,4% աճ՝ 2022 թվականի համեմատությամբ):

2023 թվականին աճ է գրանցվել հարկային եկամուտների գրեթե բոլոր ուղղություններով: Մասնավորապես՝ ԱԱՀ եկամուտներն աճել են 12.9%-ով, ակցիզային հարկը՝ 17.2%-ով, շահութահարկը՝ 44.3%-ով, իսկ եկամտային հարկը՝ 16.8%-ով: Բարձր աճ են գրանցել նաև սոցիալական վճարները (40.1%)՝ կապված գրանցված աշխատողների թվի ավելացման և անվանական աշխատավարձի բարձրացման հետ:

[28] ՀՀ ֆինանսների նախարարության կայքէջ, Պետական բյուջե, https://minfin.am/hy/page/petakan_byuj/, ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, Համախառն ներքին արդյունք, շուկայական գներով, https://www.armstat.am/am/?nid=12&id=01001



Գծապատկեր 12. ***ՀՀ պետական բյուջեի ծախսերը (մլրդ դրամ), 2013–2023 թթ.***[29]

Բյուջետային ծախսերի աճը (2023-ին՝ 13,6%, 2022-ին՝ 12,8%) դեռևս հետ է մնում եկամուտների աճից, ինչը հանգեցրել է բյուջեի համեմատաբար ցածր պակասուրդի. 2023 թ.՝ մոտ 189 մլրդ դրամ: Մասնավորապես՝ ընթացիկ ծախսերն աճել են 11.4%-ով, իսկ կապիտալ ծախսերը՝ 24.2%-ով: Արդյունքում՝ կապիտալ ծախսերի մասնաբաժինն ընդհանուր ծախսերում շարունակում է աճել, ինչը մակրոտնտեսական տեսանկյունից դրական զարգացում է:

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման կառուցվածքում աճին (13.6%) նպաստող հիմնական ուղղություններից են *ընդհանուր բնույթի հանրային ծառայությունները*, որ ներառում է նաև պետական պարտքի սպասարկման ծախսերը (նպաստումը՝ 5.1%), *սոցիալական պաշտպանության ծախսերը* (նպաստումը՝ 4.1%) և *պաշտպանության գծով ծախսերը* (նպաստումը՝ 2%):



Գծապատկեր 13. ***Բյուջետային ծախսերն ըստ գործառնական դասակարգման (մլրդ դրամ), 2013–2023 թթ.***[30]

[29] ՀՀ ֆինանսների նախարարության կայքէջ, Պետական բյուջե, https://minfin.am/hy/page/petakan_byuj/

[30] Նույն աղբյուրը:

ՀՀ համայնքային բյուջեի դինամիկան[31] ըստ մարզերի և Երևան քաղաքի դիտարկելու պարագայում ակնհայտ է դառնում, որ համայնքային բյուջեում առյուծի բաժինը՝ միջինը 52,8 տոկոսը, կենտրոնացած է Երևան համայնքում, իսկ մնացած մասը բաշխված է 10 մարզերի միջև, այն էլ՝ դարձյալ անհավասարաչափ: 2008 թ. սկսած՝ համայնքային բյուջեի անհավասարաչափ բաշխվածությունն ավելի է խորացել, քանի որ 2012–2016 թթ. Երևան համայնքի բյուջեի մասնաբաժինն ընդհանուր համայնքային բյուջեում հատել է 60 տոկոսի շեմը: 2017 թ-ից նկատվում է այս բևեռվածության նվազման միտում, երբ Երևան համայնքի մասնաբաժինն աստիճանաբար նվազում է ընդհանուր համայնքային բյուջեի կառուցվածքում: Սակայն այստեղ ակնհայտ է ևս մեկ խնդիր. Երևանի մասնաբաժնի նվազմանը զուգընթաց աճում է համեմատաբար «ապահովված» մարզերի կշիռն ընդհանուր համայնքային բյուջեում (Կոտայք, Արմավիր), ինչը նոր հող է նախապատրաստում համայնքների բևեռվածության և տարածքային անհամաչափ զարգացման խորացման հա-մար՝ այժմ արդեն այլ մարզերի և համայնքների մասնաբաժինների ավելացման արդյունքում:

Գրեթե նույն պատկերն է նաև համայնքային բյուջեի ծախսերի «կապիտալ ծախսեր» մասի կառուցվածքը դիտարկելիս: 2008–2014 թթ. ընկած ժամանակահատվածում համայնքային բյուջեի ֆոնդային մասի, միջին հաշվով, 48 տոկոսն ուղղվել է Երևան համայնքում կապիտալ ծախսերի իրականացմանը, ինչը հանգեցրել է տարածքային անհամաչափ զարգացման խորացման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Այս պարագայում, սակայն, ծախսերի կառուցվածքը համեմատաբար դրական միտում է դրսևորել 2015 թ-ից սկսած, երբ համայնքային բյուջեով կապիտալ ծախսերի կշիռն աստիճանաբար ավելացել է Արարատի, Գեղարքունիքի, հետագայում նաև Սյունիքի մարզերում:

Եզրակացություն: Բազմաթիվ և բազմաբնույթ գործոնների ներգործության արդյունքում ՀՀ-ում ձևավորել է տնտեսության որոշակի կառուցվածք՝ իր առանձնահատկություններով, որոնց որոշ մասը իրականում բացասաբար է անդրադառնում երկրի զարգացման և բնակչության բարեկեցության վրա, մասնավորապես՝ առկա ռեսուրսների և դրանց օգտագործման արդյունքների միջև անհամամասնության, եկամուտների ձևավորման և բաշխման գործընթացներում ի հայտ եկող անարդարության, տնտեսական մեխանիզմների գործադրման խաթարման և նմանատիպ այլ դրսևորումներով:

Տնտեսական աճին մեծ նպաստում ունի ներքին պահանջարկով պայմանավորված ծառայությունների ոլորտը, իսկ «արտահանելի» հատվածի մասնաբաժինն ավելի փոքր է և շարունակաբար նվազում է: Մինչդեռ, արտահանելի ճյուղերի աճը կնվազեցնի արտաքին ֆինանսական ռեսուրսներից կախվածությունը, իսկ տնտեսական աճը կդառնա ավելի կայուն, որն էլ կենսամակարդակի բարելավման գրավականներից է:

ՀՆԱ-ում սպառման բարձր տեսակարար կշռի պահպանման արդյունքում նվազում են խնայողությունները, հետևաբար նաև ներդրումները: Սա կարող

[31] Տե՛ս ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կայքէջ, ՀՀ համայնքների բյուջետային ծախսեր, ըստ տարիների, https://mtad.am/pages/budget-expenditures-of-ra-communities

է խոչընդոտ հանդիսանալ երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման առումով: Մտահոգիչ հանգամանք են նաև սպառողական վարկերի շարունակական արագ աճի տեմպերը, ինչը վկայում է ընդհանուր սպառման վրա դրանց մեծ ազդեցության մասին:

Սպառման մեծ տեսակարար կշիռը կարող է նաև պայմանավորված լինել բնակչության հիմնական մասի եկամուտների ոչ այնքան բարձր մակարդակով: Տնային տնտեսությունների, կազմակերպությունների և պետության համար սպառման մեծ տեսակարար կշիռը կարող է նաև պահպանվել փոխառությունների հաշվին՝ հանգեցնելով պարտքի գերծանրաբեռնվածության:

Դիտարկվող ժամանակահատվածում, ըստ տնտեսության ճյուղերի, կենտրոնացվածության համեմատաբար բարձր աստիճան արձանագրվել է միջին ամսական աշխատավարձի գծով: Ինչպես ՀՆԱ արտադրության պարագայում, այս դեպքում նույնպես կառուցվածքային տեղաշարժերը հիմնականում միտված են ծառայությունների և արդյունաբերության շուրջ կենտրոնացմանը, ինչը տեղի է ունենում հիմնականում գյուղատնտեսության և շինարարության հաշվին:

Աշխատավարձի միտումները Հայաստանում, բացահայտելով զգալի տարբերություններ ոլորտների, տարածաշրջանների և կազմակերպությունների միջև, արտացոլում են ավելի լայն տնտեսական և սոցիալական օրինաչափություններ: ՏՏ ոլորտում բարձր աշխատավարձերը և ֆինանսական հատվածում անկայուն, բայց մրցունակ աշխատավարձերն ընդգծում են զարգացող տնտեսական հնարավորությունները՝ պայմանավորված տեխնոլոգիական առաջընթացով: Միևնույն ժամանակ, կրթության և գյուղատնտեսության ոլորտում շարունակաբար ցածր աշխատավարձերը մտահոգություններ են առաջացնում կենսական այս ոլորտների երկարաժամկետ կայունության վերաբերյալ:

Դիտարկվող ժամանակահատվածում տնային տնտեսությունների եկամուտների և ծախսերի աճ է գրանցվել: Եկամուտների աճը հիմնականում նոր աշխատատեղերի ստեղծման և անվանական միջին աշխատավարձերի աճի արդյունք է: Տնտեսության որոշ ոլորտներում գնաճի տեմպը առաջանցիկ է եղել աշխատավարձերի աճի տեմպի համեմատությամբ, ինչը հիմք է՝ պնդելու, որ այդ ոլորտներում կենսամակարդակի բարելավում տեղի չի ունեցել: Ծախսերի կառուցվածքում ամենամեծ մասնաբաժինը սննդի վրա կատարված ծախսերինն է, ինչը բնորոշ չէ կենսամակարդակի բարձր մակարդակ ունեցող երկրներին:

ՀՀ տարածքային անհամաչափ զարգացման խնդիրն իր արտացոլումն է գտել սոցիալական ենթակառուցվածքներում ներդրումների իրականացման մեջ, քանի որ համայնքային սահմանափակ բյուջեի հիմնական միջոցներն ուղղվում են վարչական ծախսերի իրականացմանը, իսկ բյուջեի ֆոնդային մասը հիմնականում չի կարողանում բավարարել սոցիալական ենթակառուցվածքների պահպանության, առավել ևս վերակառուցման ծախսերի կատարումը:

Չնայած մակրոտնտեսական ցուցանիշների բարելավմանը՝ աղքատության մակարդակը դեռևս բարձր է: Փաստորեն, տնտեսության աշխուժացումը չի ազդում ընդհանուր բնակչության կենսամակարդակի բարելավման վրա:

Դա հիմնականում եկամուտների անհավասարաչափ բաշխման ու բնակչության բևեռացման արդյունք է: Տնտեսության բարելավումները հիմնականում նպաստել են բարեկեցիկ տնային տնտեսությունների կենսամակարդակի բարձրացմանը, որոնք ավելի արագ են վերականգնվում ու դուրս գալիս աղքատությունից, քան ծայրահեղ աղքատ տնտեսությունները, որոնց կենսամակարդակը մնացել է նույնը կամ ավելի է վատացել, որին նպաստել է գնաճը՝ դրսևորված լինելով հատկապես պարենային ապրանքների գների մակարդակի բարձրացմամբ:

Այս դիտարկման լույսով կարող ենք եզրակացնել, որ տնտեսության աշխուժացման և կենսամակարդակի միջև կապը եկամուտների անհավասար բաշխման ու սոցիալական բևեռացման հետևանքով այդքան էլ ամուր չէ:

Օգտագործված գրականություն

1. Արմենակյան Ռ. Ռ., Բնակչության կենսամակարդակը և պետության սոցիալական քաղաքականությունը, Եր., 2004, URL: https://library.asue.am/open/1106.pdf
2. Խառատյան Ա., Գալստյան Ա., Եկամուտների անհավասարության և աղքատության արդի միտումները, «Բանբեր Երևանի համալսարանի. տնտեսագիտություն», N3, 2022, էջ 76-91, http://www.old.ysu.am/files/07A_Kharatyan_A_Galstyan.pdf
3. Խաչատրյան Ա., Աղքատության նյութական և ոչ նյութական հարթությունները Հայաստանի Հանրապետությունում, ՀՊՏՀ, «Տնտեսություն և հասարակություն», 3(3), 2023, 69-95, https://asue.am/upload/files/science/economy/2023-year-3/4.pdf
4. Ղազարյան Ռ., Լևոնյան Մ., ՀՀ բնակչության եկամուտները և ծախսերը, «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, 11(2), 2020, էջ 142-149, https://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2020_2_142_149.pdf
5. Маркс К., Энгельс Ф., Соч., 2 изд: т. 16-М // Изд. Полит. литер., 1960, URL: https://www.marxists.org/russkij/marx/cw/t16.pdf
6. Майер В. Ф., Планирование социального развития и повышения уровня жизни народа. М.: Изд-во МГУ, 1998, http://library.vscc.ac.ru/Files/books/1439211417uroven_zhizni_opyt_preprint.pdf
7. Mamunova A. E., Tulenova S. M., The theoretical aspect of the «standard of accommodation» category // The Journal of Psychology & Sociology, Vol. 49, No. 2, 2014, URL: https://bulletin-psysoc.kaznu.kz/index.php/1-psy/issue/view/26
8. Суринов А. Е., Луппов А. Б., Дифференциация доходов населения и стоимость жизни на субрегиональном уровне, Оценки для России // Экономический журнал Высшей школы экономики, № 4 (26), 2022, с. 552–578, URL: https://ej.hse.ru/data/2022/12/07/1714262991/%D0%A1%D1%83%D1%80%D0%B8%D0%BD%D0%BE%D0%B2.pdf

9. Степанов В. С., Бобков В. Н., Шамаева Е. Ф., Одинцова Е. В., Построение модели, связывающей индикатор уровня жизни населения с комплексом показателей социально-экономической политики в регионах России // Уровень жизни населения регионов России, том 18, No. 4, 2022, DOI 10.19181/lsprr.2022.18.4.3, URL: https://cyberleninka.ru/article/n/postroenie-modeli-svyazyvayuschey-indikator-urovnya-zhizni-naseleniya-s-kompleksom-pokazateley-sotsialno-ekonomicheskoy-politiki-v/viewer
10. Харитонова Т., Алексеева С., Уровень жизни населения: основные подходы к оценке показателей. Нива Поволжья // Экономические науки, № 2 (39), 2016 май, с. 134, URL: https://cyberleninka.ru/article/n/uroven-zhizni-naseleniya-osnovnye-podhody-k-otsenke-pokazateley/viewer
11. Севрюкова С. В., Коростелева О. Н., Формирование денежных доходов населения как социально-экономический аспект регулирования уровня жизни // Научно-методический электронный журнал «Концепт», № 11, 2017 (ноябрь), с. 151–155, URL: https://e-koncept.ru/2017 /174019.htm
12. Рогачева Т. М., Нигматулин Е. З., Серикбаев Б. К., Социальная политика: качество жизни и социальная защита населения // Алматы: РИО ВАК РК, 2000.
13. Kim T., Ambartsumyan A., Egamberdiyev F., The ways of improvement of living standards // International Journal of Psychosocial Rehabilitation, 24(04), 2020, URL: https://www.researchgate.net/publication/339847000_THE_WAYS_OF_IMPROVEMENT_OF_LIVING_STANDARDS
14. ՀՀ ԿԲ պաշտոնական կայք, https://cba.am/
15. ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայք, https://minfin.am/hy
16. ՀՀ ՎԿ պաշտոնական կայք, https://armstat.am/am/

ОГАНЕС МЕЛКУМЯН
Преподаватель кафедры международных экономических отношений АГЭУ, кандидат экономических наук

ЛУИЗА САРАФЯН
Соискатель кафедры финансового учета АГЭУ

МИКАЕЛ НАВАСАРДЯН
Аспирант кафедры макроэкономики АГЭУ

КАМО ДАВТЯН
Аспирант кафедры экономико-математических методов АГЭУ

Анализ факторов, характеризирующих уровень жизни в РА и влияющих на него.– Бесспорно, что для правильной оценки возможностей повышения уровня жизни, выработки соответствующей социальной и экономической политики особенно важно иметь четкую и достоверную информацию о

макроэкономической ситуации. Однако в последнее время из-за пандемии, российско-украинской войны, климатических и экологических катастроф, как во всем мире, так и в Республике Армения, неопределенность возросла. К факторам внешнего воздействия, создающим тревожную картину с точки зрения ограничения возможностей повышения уровня жизни страны, прибавляются неблагоприятная политическая и военная ситуация внутри страны, постоянно усиливающаяся нестабильность. Подобные вызовы, неопределенности и неожиданные события всегда сопровождали развитие цивилизации, поэтому важно искать пути их преодоления и определять возможности для реализации. Актуальность оценки уровня жизни именно в таком контексте не подлежит сомнению.

Изменение макроэкономических показателей, социально-экономические реформы существенно обуславливают изменение уровня жизни. В статье, помимо анализа динамики макроэкономических показателей, характеризующих уровень жизни, уточнения факторов, способствующих повышению уровня жизни, указаны основные препятствия и вызовы, которые ограничивают или могут ограничить нынешние и будущие возможности повышения уровня жизни.

Ключевые слова: *уровень жизни, фактор, макроэкономические показатели, структура, инфляция, заработная плата, потребление*
JEL: I31, E24
DOI: 10.52174/29538114_2024.2-29

HOVHANNES MELKUMYAN
Lecturer of the Chair of International Economic Relations at ASUE, PhD in Economics

LOUISA SARAFYAN
PhD Applicant for the Chair of Financial Accounting at ASUE

MICHAEL NAVASARDYAN
PhD Student of the Chair of Macroeconomics at ASUE

KAMO DAVTYAN
PhD Student of the Chair of Mathematical Methods in Economics at ASUE

Analysis of Factors Characterizing and Influencing the Standard of Living in RA.– To accurately assess the possibilities for raising the standard of living and to develop effective social and economic policies, it is essential to have clear and reliable information about the current situation. However, in recent years, uncertainty has grown globally and in Armenia due to the

pandemic, the Russia-Ukraine war, and environmental and ecological crises. The unfavorable political and military situation inside the country and the ever-increasing instabilities add to to the external influencing factors, which create a worrying picture in terms of limiting the possibilities of raising the country's standard of living. However, such challenges are not new, uncertainties and unexpected events have always accompanied the development of civilization, so it is important to look for ways to overcome them and identify opportunities for implementation. In this context, the urgency of assessing the standard of living becomes even more evident.

Changes in macroeconomic indicators, social-economic reforms significantly change the standard of living. This paper analyzes trends in these macroeconomic indicators, identifies factors that contribute to improving the standard of living, and highlights key obstacles and challenges that have constrained–or may constrain–current and future opportunities for improvement.

Keywords: *standard of living, factor, macroeconomic indicators, structure, inflation, wages, consumption*
JEL: I31, E24
DOI: 10.52174/29538114_2024.2-29